ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԵԼԸ ՈՉՆՉԱՑՆՈՒՄ Է ՄԵՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐԱ ՋՈՀՐԱԲՅԱՆ

24.05.2019 18:10

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի հանդիսավոր նիստի ժամանակ անդամների միաձայն քվեարկության արդյունքում ՀՀ փաստաբանական դպրոցի 72 ունկնդիրների հանձնվեցին փաստաբանի մասնագիտական գործունեության արտոնագրեր:

Ողջույնի խոսքում փաստաբանների պալատի նախագահ Արա Ջոհրաբյանը շնորհավորելով ունկնդիրներին՝ խորհուրդ տվեց իրենց մասնագիտական գործունեության ընթացքում հավատարիմ մնալ փաստաբանի երդմանը և անդավաճան՝ մասնագիտությանը: «**Այսօր մեզ համար հիշարժան օր է: Մեր համայնքը քիչ անց համալրվելու է 72 փաստաբաններով: Անձիք, ովքեր բարձր մրցակցության պայմաններում ընդունվել են փաստաբանական դպրոց, հաջողությամբ ավարտել ու հանձնել են որակավորման քննությունները և արժանացել են փաստաբանի պատվաբեր կոչմանը: Սկսած ուսման հենց սկզբից քարոզում ենք հեռու մնալ կոռուպցիայից: Մեր համայնք մուտք եք գործում ձեր գիտելիքներով, որը ապացույցն է այն բանի, որ Փաստաբանական դպրոցում ու Փաստաբանների պալատում կոռուպցիա չկա: Կոռուպցիայի մեջ ներգրավելը ոչնչացնում է մեր մասնագիտությունը**»,-նշել է Արա Ջոհրաբյանը:

Պալատի նախագահը խոսելով փաստաբանների մասնագիտական գործունեության դժվար, սակայն հետաքրքիր աշխատանքի մասին՝ նշել է, որ մասնագիտական գործունեության արտոնագիր ստացող փաստաբանները կբախվեն անօրինականությունների, բռնի ուժի, կոռուպցիայի ու կամայականությունների հետ, սակայն խորհուրդ է տվել պայքարել այդ բացասական երևույթների դեմ: Եզրափակելով ելույթը՝ Արա Ջոհրաբյանը շնորհակալություն է հայտնել որակավորման հանձնաժողովի անդամներին, փաստաբանական դպրոցի աշխատակազմին ու դասախոսական կազմին:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ, փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը նույնպես շնորհավորել է շրջանավարտներին և նշել, որ. «**Փաստաբանական դպրոցը միշտ ձեռնարկում է համապատասխան միջոցներ, որպեսզի ունկնդիրների ուսուցումը**

հավուր պատշաճի իրականացվի, և այդ ժամանակահատվածում փորձում ենք անել ամեն ինչ, որպեսզի դուք ստանաք անհրաժեշտ հմտությունները և գիտելիքները ձեր մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար»:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Կարեն Մեժլումյանը նույնպես ողջունել է ունկնդիրներին և իր խոսքում ընդգծել իրավապաշտպան բնույթի կարևորության մասին: Նա մասնավորապես ասել է,-«**Գիտեք, որ ապրում ենք մի ժամանակաշրջան, երբ կարող են կամա թե ակամա խախտվել մարդկանց իրավունքներ, որտեղ ձեր իրավապաշտպան աջակցությունը կարող է պետք գալ մեր քաղաքացիներին: Գտնում եմ, որ մեր մասնագիտությունը լավագույն մասնագիտություններից է, որովհետև իրավապաշտպանի գործը շնորհակալ գործունեություն է**»:

Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանը միացավ շնորհավորանքներին և խորհուրդ տվեց շրջանավարտներին լինել բարեխիղճ, պրոֆեսիոնալ և զուսպ:

Փաստաբանների պալատի խորհդի անդամ Գայանե Դեմիրչյանն իր խոսքում ասաց,- «**Մեր հասարակությունն առավել քան երբևէ ունի խելացի, չերկնչող, սկզբունքային մասնագետների և հատկապես փաստաբանների կարիք: Մաղթում եմ, որ ձեր գործունեությամբ հասնեք իրավունքի գերակայության ամրապնդմանը մեր երկրում: Ինչպես ասում են լավ փաստաբանը գիտի բոլոր նախադեպերը, իսկ լավագույն փաստաբանն ինքն է ստեղծում նախադեպեր: Մաղթում եմ, որ լրացնեք լավագույն փաստաբանների շարքերը**»:

Շնորհակալական խոսքով հանդես եկան ՀՀ փաստաբանական դպրոցի շրջանավարտներից Ալեքսանդր Կոչուբաևը, Նաիրա Ալավերդյանը և Գուրգեն Գրիգորյանը:

Խորհրդի հանդիսավոր մասը շարունակվել է շրջանավարտների երդմնակալության արարողությամբ: Ունկնդիրները երդվել են ազնիվ և բարեխիղճ կատարել փաստաբանի պարտականությունները, պահպանել փաստաբանական գաղտնիքը, պաշտպանել վստահորդների իրավունքները, ազատությունները և շահերը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով

և փաստաբանի վարքագծի կանոնագրքով:



ՓԱՍՏԱԲԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

EREBUNI
PLAZA
ՓԱՍՏԱԲԱՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
EREBUNI
PLAZA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՂԱՍՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
EREBUNI
PLAZA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓԱՂԱՍՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՃՇՄԱՐՏԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
EREBUNI
PLAZA
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՃՇՄԱՐՏԵՔ ԵՎ ՊԱՇՏՊԱՆԵՔ
ՁԵՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA



Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })